

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեկանի

Պոչկարիոյ համար տարեկան 10ֆր

" " 1/2 " 5 "

Արտասահմանի համար " 12 "

" " 1/2 " 6 "

Կանխիկ վճարելի

Նամակ դրամ եռայն իսկից հետեւեալ հասցեով

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐՈՎ)

Редакция на вѣстникъ

„Ирaвyнкъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք ետ չեն դրկուիր եւ յարմար դատուածներն միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ:

Ծանուցմանց տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 զեղ կը լինի:

ՅԵՏԱՄԱՑՈՒԹԵԱՆ ՆՁԱՆ ՄԸ

— — —

Պուշկարահայերու մտային զարգացման շատ կը համապատասխանեն հրապարակային քննադատութեան մասին մեզմէ շատերուն ծուռ ու մուռ ըմբռնումները:

Հրապարակային ամենաթեթեւ քննադատութիւն մը, պարզ դիտողութիւն մը, թէեւ գրուած ըլլայ ամենէն օրինաւոր ձեւով և չափաւոր լեզուով, իբր նախատիք և թշնամական ոգիով գրուած կը նկատուի. հետեւեալը յայտնի է, գրողութիւն, զայրոյթ գրողին դէմ, որ քննադատութենէ խրատ չտոնելուն համար խառնակիչ մըն է պարզապէս, ժողովրդին մէջ պառակտում և անմիաբանութիւն ձգելու չար հակամիտութեամբ տողորուած:

Այս որքան սխալ, այնքան վնասակար դատողութեան, որուն յաճախ արձագանգ կուտան մեզ զբրկուած գրողութիւններ, շատ բնական է որ հանդիպենք միջավայրի մը մէջ, ուր պարբերական հրատարակութեանց ընթերցումը ընդհանրացած ու պէտք մը դարձած չէ: Եթէ միայն 5-10 տարիէ ի վեր 1-2 հայ թերթեր հրատարակուած ըլլային Պուշկարիոյ մէջ, քննադատութիւնը դատելու այս նախական խակ չըլանէն անցած և այս մասին խորհելու աւելի հասուն և ճիշդ կերպ մը իւրացուցած պիտի ըլլայինք:

Իսկ այսօր տակաւին պէտք ունինք կարգաւոր և քիչ մը աւելի զարգանալու, որպէս զի ամէնքս ալ, մեծ ու պզտիկ, կարենանք լիովին ըմբռնել սա ճշմարտութիւնը թէ քննադատութիւնը անհրաժեշտ պէտք մըն է ամէն հանրային գործունէութեան համար որուն զարգացման ու կանոնաւորութեան կը ծառայէ իբր խթան և ուղեցոյց:

Քննադատութիւնը տարր մըն է որ շարժում և հոգի կուտայ: Ամէնէն յառաջագէտ ազգերու մէջ ամէնէն աւելի զարգացած է բնականաբար և փոխադարձաբար՝ ամէնէն յետադէմներուն անծանօթ է քննադատու-

թիւնը, զի անոնց մէջ կը տիրէ մեղմութիւն:

Մասնաւորապէս մեր մէջ, ուր պաշտօնէութեանց, ազգ. հաստատութեանց և ընկերութեանց վարիչներու և ուրիշ գործիչներու համար օրինական պատասխանատուութիւնը, պատմական հանգամանքներու բերմամբ, գրեթէ չգոյութեան աստիճան հասնելու չափ թոյլ է, քննադատութիւնը աւելի մեծ դեր ունի կատարելիք:

Ամէն մարդկային գործ, ամէն հաստատութիւն իր թերի կողմերը կունենայ միշտ, ուստի միշտ պէտք ունի բարեկարգուելու: Բարեկարգութեան հզօր միջոցներէն մին ալ հրապարակային քննադատութիւնն է: Եթէ այս ճշմարիտ է, պէտք է որ սիրենք, յարգենք քննադատութիւնը, փոխանակ անկէ խրատ չելու, ինչ որ պարզապէս մտային և բարոյական յետամնացութեան նշան մըն է:

Պէտք է որ վերջապէս հասկընանք թէ քննադատութիւնը, ուղղաժող և օրինաւոր քննադատութիւնը, չենթադրեր անուանարկելու դիտում, այլ հանրային գործ մը լաւագոյն վիճակի մէջ տեսնելու գովելի փափագը:

Քննադատութիւն մը կրնայ ըլլալ ուղիղ կամ սխալ. առաջին պարագային մէջ քննադատողը պարտի ուղղել իր ընթացքը, երկրորդին մէջ, կամ կարեւորութիւն չտալ ու լռիկ շարունակել իր գործը, կամ հակաքննադատականով մը հերքել ինչ որ ըսած է քննադատը, իսկ այս վերջինը խոստովանելու է իր սխալը լռելեայն կամ հրապարակաւ:

Այս է ազնուութիւնը, այս է ուղղամտութիւնը և այսպէս կը պահանջէ հանրային օգուտը: (*)

(*) Հարկ կը տեսնենք յայտարարել թէ այս յօդուածը չափաւոր բնաւ Փ. Պուշկարիոյ վարձարաններու Պատ. Հրապարակութեան նամակին, զոր կը հրատարակենք մեր ներկայ թիւին մէջ եւ զոր ստացած ենք մեր յօդուածը գրելէ ետքը:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

— — —

Բոլոր վառնայի հայ հասարակութիւնը օրը օրին հետեւեալ անշուշտ արագ վերաշինութեան ազգային այն յոյժ կարեւոր չէնք, որու մասին արդէն անգամ մը գրուեցաւ այս էջերուն մէջ:

Հրկիզեալ վարժարանի աւերակ գետնին վրայ այժմ կը բարձրանայ հաստահիմն ու լայնահիստ շէնք մը, որուն աւարտման համար յատկացուած գումարը, արդիւնք ապահովագրութեան, ըստ պառնելու վրայ է: Երբ թաղ. խորհուրդը ձեռնարկեց այս շինութեան գործին, գիտէր արդէն թէ իր տրամադրութեան ներքեւ գտնուած գումարը, իբր 14000 ֆրանք, անբաւական էր գործին ամբողջացմանը. բայց իր յոյսը դրած էր ազգայիններու նիւթական օժանդակութեան վրայ, որ առաջին հրաւերով իսկ պիտի դար հասներ, կիսատ չձգելով աւարտումը այնպիսի շէնքի մը որ սահմանուած է մեծ դեր կատարել վառնայի հայ հասարակութեան զարգացմանը և յառաջդիմութեանը համար: Այս մասին անշուշտ ոչ մէկ հայ չի տարակուսիր, ու գիտէ թէ այդ յարկը կոչուած է մեծ ազդեցութիւն ունենալ վառնայի հայութեան ներկայ և ապագայ սերունդներուն վրայ: Հետեւապէս աւելորդ է անոր կարեւորութեան մասին երկար շատագովութիւններ ընել:

Կիմանանք թէ թաղ. խորհուրդը ժամանակն եկած կը նկատէ դիմելու հայ հասարակութեան քսակին, անյապաղ վերջացնելու համար ազգ. այս շէնքը, որ լըմբնալէն անմիջապէս ետքը պիտի մատուցանէ շիրմէ սպասուած ծառայութիւնները: Հանգանակութեան տեսր մը պատրաստուած է, ուր նուիրատուները պիտի արձանագրեն իրենց անունները նուիրուած գումարներով միասին: Ձեռնարկը արդէն ինքնին հրաւեր ու խրախոյս ըլլալով անօգուտ է այդ իմաստով բառեր չուայլել: Տարակոյս չկայ որ կըր-

թասէր ազգայինները իրենց շերտ պատրաստակաճութեամբ մեծապէս պիտի դիւրացնեն թաղական խորհուրդին կատարելիք գիմումները, սիրայօթար տալով իրենց լուծման: Արդէն, ինչպէս ծանուցինք, դեռ չենք ին առաջին քարն իսկ զետեղուած չէր երբ կրթասէր ազգայինի մը, Տիար Պօղոս փա. փաղեանի նախաձեռնութեամբ Ֆիլիպէի մէջ կատարուած հանգանակութիւն մը բաւական գոհացուցիչ գումար մը արտագրած էր: Չի յուսացուիր որ վառնան ուզէ վար մնալ Ֆիլիպէէն որ վերջապէս շիտակը բնաւ ուղղակի շահ չունէր գործին մէջ:

Այս պարագային մէջ վառնայի հայը բացարձակապէս պէտք է մէկդի վանէ զանազան քաջջուր և անձուկ նկատումներ, որոնք բնաւ ունեն օգուտ կամ գոհացում չեն բերեր, և ընդհակառակը կը վնասեն այնպիսի ձեռնարկի մը յաջողութեան, որուն չգոյութիւնը անվրէպ վնաս է ազգային զարգացման ու յառաջդիմութեան տեսակէտով:

Ռուսոգի հայութիւնը միեւնոյն պարագային մէջ ցուցուցած վեհանքն, շրջահայեաց ու ասպեւակաւ ընթացքը թելադրել օրինակ մը հանդիսանալու է վառնայի հայութեան:

Քանի մը տարի առաջ ալ Ֆիլիպէն էր որ նմանօրինակ ձեռնարկի մը մէջ լիովին յաջողեցաւ. այսօր Բազարճըզի հայ հասարակութիւնը ամէն համոզիչ նշաններ ցոյց կուտայ նոյն հանրօգուտ ու կրթասէր ձեռնարկին մէջէն ճերմակերես դուրս ելլալու:

Եւ ահա ժամանակն եկած է որ վառնայի հայն ալ ինքզինքը ցուցունէ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— — —

Ձեր պատուական թերթին 45 և 46 երրորդ թիւերուն մէջ բաւական ընդարձակ տեղեկութիւններ տուած էք տեղւոյս հայերուն վրայօք և, ի մէջ այլոց, խօսե-

լով նաեւ վարժարանի ծրագրին մասին, քննադատած էք զայն:

Սակայն, դժբախտաբար, այդու ուրիշ բան չէք ըրած, բայց միայն երկար «մեղք» մը աւելցընել այն մեղքին վրայ զոր կը ցաւինք որ գործած էք ֆիլիպէի ազգ. վարժարանին նկատմամբ այդ օրինակ սխալ դադափարներ կազմելով և հրապարակի առկով:

Նախ և առաջ, ծրագրին վերջին տարւոյ կրօնի դասընթացքին մէջ գրուած հոգւոյ անմահութիւնը օրինակ կը բերէք իւրեւ բարեփոխելի կէտերէն մին: Բայց վարժարանի է թէ ինչ պատճառաւ այնչափ բարձրէն կը ներկայացունէք զայն և, «իմաստասիրական այնքան մեծ խնդիր գիտական փաստերով ապացուցանել», «համալսմամբ սորվել» և այլ այս տեսակ բառերու և ասացուածներու ուղղածն ապակիին տակ դնելով ծրագրին այդ կէտը՝ շատ խոշոր բան մը կը դարձնէք զայն ամէնուն աչքին առջեւ: Պիտի ներէք մեզ անշուշտ հարցունել թէ՛ ինչպէս ձեր քննադատութեանց իբրեւ եզրակացութիւն ըսել կուզէք թէ՛ մեր գրաւորոցին մէջ հոգւոյ անմահութիւնը իմաստասիրական ապացոյցներով և գիտական փաստերով դաս կը տրուի տղայոց: Ծրագրին վերջին տարւոյն մէջ կրօնագիտութեան համար գրուած է հետեւեալը.

Անմահութիւն հոգւոյ. — յաւիտենական կեանք. — Պատմութիւն Հայաստ. եկեղեցւոյ:

Կրօնի ուսումը, որուն մէկ կարեւոր մասը կը կազմէ հոգւոյ անմահութիւնը, իբրեւ գլխաւոր ուսանելիք, մեր դպրոցին ամենէն ստորին կարգէն սկսեալ կը շարունակուի դասախօսութիւն մինչեւ բարձրագոյնը, իւրաքանչիւր տարի նախորդէն աստիճանաբար աւելի ընդարձակ ծանօթութիւն ներով և բարոյականի հրահանգներով, ո՛չ իբրեւ աստուածաբանական գիտութիւն, ինչպէս կը

կարծէք թերեւս, այլ նպատակ ունենալով գիտակից ընել տղան իր ազգային կրօնքին և եկեղեցւոյն և կրթիչ զայն Ս. Գրքի բարոյականովը:

Եւ ինչ պատճառաւ արգելք, ինչպէս կըսէք, այդ դասերը այլ եւս չուանդուին բարձրագոյն կարգին: Պէտք է դիտել որ այդ աշակերտները, որքան ալ «գիտական ծանօթութիւններ» ստացած ըլլան, համալսարանական ուսանողներ չեն անշուշտ որ հոգւոյ անմահութիւնը, իբրեւ զուտ գիտական և իմաստասիրական խնդիր, ձեր ըսած եզրակացութեան, որամբանական փաստերով և ապացոյցներով սորվելու անհրաժեշտ պէտքը ունենան, և կամ, այդ 14-15 տարեկան արդէն անդատճառ «այդ տեսակ իմաստասիրական դժուարին խնդիր մը քննելով սորվելու» հարկին մէջ գտնուելով, մատչելի չըլլայ իրենց մտքին:

Մեր դպրոցին մէջ, ինչպէս ըսինք, հոգւոյ անմահութիւնը թէ ստորին և թէ բարձրագոյն կարգի աշակերտը կը սորվի ճիշդ այնպէս ինչպէս կը սորվի, օրինակի համար, Ուրբուոյն Աստուծոյ մարգեղութիւնը կամ աստուածային անձանց երրորդութիւնը:

Երկրորդ ծրագրին մէջ բարեփոխելի կը գտնէք այն թէ՛ ազգ. պատմութիւնը մինչեւ Գ. կարգ կաւանդուի և հոն կը դադրի:

Ազգ. պատմութեան ուսուցման համար երեք տարին շատ է ու թիչ չէ. աւելցունելով անոր վրայ մանկապարտէզի շրջանին վերջին տարին, ուրկէ արդէն դեռահաս մանուկը ազգ. պատմութեան վերաբերեալ նախնական դադափարներու փոքրիկ պաշար մը հետեւ առած կուգայ կը մտնէ վարժարանի Ա. կարգը, կըլլայ չորս. բայց աստի բնաւ չէք յիշած ծրագրին վերջին տարւոյն մէջ գրուած Հայաստանի աշխարհագրութիւնը որ աշակերտին իր հայ-

րենի երկրին վրայ տեղական ծանօթութիւններ տալով հանդերձ, լեռնականաբար պիտի յիշեցունէ նաեւ անոր ազգ. պատմութեան նշանաւոր դէպքերն ու դէպքերը: Ըսել է, աշակերտը այս կերպովը դպրոցէն ելած տարին, վերջին անգամ մը ալ երկրորդած կըլլայ ազգային պատմութիւնը: Այս ամենէն ետք, ինչպէս ուրեմն կը սէք դարձնալ թէ՛ «ազգան մինչեւ 12 տարեկան հասակը միայն կը սորվի այդ աշխարհի էական ուսումը եւն»:

Գալով «ազգային ոգին զարգացնելու», այդ՝ ազգ. պատմութեան չէ տրուած միայն: Ազգային ոգին զարգացնելու, հայրենասիրական եւանդը վառելու համար արիւշ միջոցներ չեն պակասիր մեր դպրոցին մէջ, և փափաքելի է որ նոյնպէս ըլլար ուրիշ վարժարաններու մէջ ալ:

Իսկ այն որ ըսած էք թէ՛ «Եթէ առած տեղեկութիւններս ըստոյց են, դասերուն աւանդման եղանակները շատ չեն համապատասխաներ մանկավարժական արդի պահանջներուն», լաւագոյն պիտի ըլլար թէ որ ստոյգ և հիմնական բան մը ըսէիք, որովհետեւ «եթէ»ներու շատ վատահոլութիւն չըլլար սովորաբար:

Միք «մանկավարժական արդի պահանջում» և «ուսուցման եղանակ» ըսելովուրիշ բան չենք կրնար ըմբռնել բայց միայն ազգին տըղաքը իրենց ազգային դաստիարակութեան մէջ զարգացունել և արդիւնաւոր ընել ժամանակին պահանջած կերպով, ինկատի ունենալով միանգամայն տեղական հանգամանքները՝ որ օտարերկրեայ վարժարաններու ուղղութեան մէջ բաւական մեծ դեր մը կը կատարեն:

Եւ որովհետեւ տարիներու փոքրեւոր և ձեռք բերուած արդիւնքները գործնականապէս ապացուցած են թէ՛ մեր վարժարանին ընթացքը ամենայնիւ ա՛յն ուղ-

ղութեան մէջ կը գտնուի ինչ որ յիշեցինք թիչ մը վերը, հետեւաբար հարկ չենք տեսներ առ այժմ ծրագրի բարեփոխման, այլ կը բաղձանք միայն որ ինչպէս մինչեւ ցարդ, նոյնպէս և այսուհետեւ վարժարանն յարատեւէ իր այդ արդիւնաւոր ընթացքին և ուղղութեան մէջ:

Կը խնդրենք, Մեծապատիւ Տէր, որ բարեհաճիք ներկայս հըրատարակել Ձեր պատուական թերթին միջոցաւ, որով ապացոյց մը տուած պիտի ըլլաք Ձեր անկողմնակալութեան և որուն համար կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնները:

Ազգ. վարժարանոց հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ
Կ. Սահակեան Տ. Սարափեան

Տեղի անձկութիւնը կը ստիպէ մեզ թիրթիւր յառաջիկայ թիւին յետաձգել մեր պատասխանը Պատ. Հոգաբարձութեան այս նամակին:

ՖԻԱՆՔՈՒՄ ԴԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ԿԱՐԾԻՔ

Ֆրաքեւուս դաշնակցութեան վերջնական կերպով հարաւորութիւն առթիւ Երրեակ Նիդալակցութեան մամուլն յայտնած կարծիքները հետաքրքրական է իմանալ:

Գէօնիչէ Չայթունկ կըսէ. «Ֆրաքեւուս դաշնակցութիւնը, ինչպէս Չարին իսօքը կերպարաւորէ, սահմանուած է խաղաղութեան պահպանման նպատակով, գործելով իրաւունքի և արդարութեան համաձայն, և Գերմանիոյ կայսրը խոտաւորած է իր բոլոր զօրութեամբ ուժ տալ Չարին՝ այս գործին կատարմանը մէջ: Ուրեմն ամեն սխալ մեկնութեանց առաջին առնելու համար պարտինք յիշել

ԲՈՆՈՒԹԵԱՆ ԶՈՅՆԵՐ

(ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՈՐԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Գ.

Հոկտեմբերի սկիզբին մի կատարեալ ձմերային օր, ցերեկայ ժամը մէկին, հասայ Գ... քաղաքը—իմ աքսորավայրը, ուր ստիպւած էի սպորի երեք երկար ու ձիգ տարիներ: Երեք տարի մի իւրեւ անկիւնում, միշտ անշարժ ու ճանձային կեանքի մէջ: Ահա թէ ուս կառավարութիւնը ինչպէս էր ուղղում իմ մէջ մեղքներ բողբոջող ոգին և մարել սիրտը լափող ազատասիրութեան կրակը: Իսկ եթէ նրան այդ աջողութիւն... բայց աւելի լաւ չէ՞ր մեռնել քան թէ դեռ երեսուն տարին չը լրացած ընկճել, ուրանալ

սկզբունք ու գաղափարներ եւ ընկնել սովորական կեանքի դանդաղ ու պղտոր հոսանքի մէջ... չէ՛ չեմ ընկճվել: Ահա այս եղաւ իմ որոշումը—երբ ոտքս դրի աքսորավայրի հողի վրա...

Վերջապէս երբ ոտս կանաւորուն ներկայացայ եւ քարտուղարը ինձ յայտնեց թէ աղատ եմ եւ կարող եմ առանց պահապանի քաղաք գնալ, ականջիս չը հաւատացի: Ամբողջ մէկ տարի կաշկանդւած, տեսակ տեսակ բանտերում, շոգեկառքի վակոններում եւ նաւերում փակւած, միշտ խիստ հակողութեան տակ՝ իսկ հիմա ազատ...

Միթէ հաւատամ... Այո, ով չէ եղել բանտում, չէ գրկվել սեփական կամքից, երկար չէ ապրել կոշտ բանտապահի, բիրտ գինւորի, և գոռող պաշտօնեայի քմահաճոյից համեմատ, նա չէ կարող լաւ գնահատել ազատութիւնը...

Ես հրճվում էի եւ այնքան ստատիկ, որ մոռացել էի թէ իմ գրպանում կու-

պէկ չըկար եւ պատրաստվում էի վայրկեան առաջ դուրս թռչել ոտս կանաւորուն կողմը զգլկել հիմնարկութիւնից... երբ յանկարծ միտքս ընկաւ որ դրամ չունիմ, իսկոյն ես վազեցի եւ դիմեցի քարտուղարին:

—Պարոն, ես ծիւխի բանտից դըրամ եմ ուղարկել նահանգապետի առնումով, անշուշտ այդ դրամը ձեզ են ուղարկել, քանի որ ինձ այստեղ ուղարկեցին:

—Ոչ, մենք դրամ չենք ստացել: Կարծես թէ գլխիս մի մեծ քար ընկաւ... մի քանի վայրկեան մնացի շաւրած:

Առանց մի կոպէկի, աշխարհի մի ծայրում, աքսորավայրի ճնշող պայմանների մէջ, ինչ անել, ո՞ւմ դիմել... ահա հայրցիւր, որոնք իսկոյն ծագեցին իմ գլխում:

Ահա քեզ ազատութիւն—ցուրտ ձմեռ, անտուն, անհաց եւ անդգիտ, թոշուհից էլ ազատ—սրանից էլ դուռն հեզնութիւն կարող էր լինել:

Կամքեր խորտակելու, գաղափարի համար կռուողներին ճգնելու, լաւ միջոցներից մէկն էլ այս է բռնակալների ձեռքում, որոնք ամեն մի միջոց գործ են դնում իրանց զօրութեան հիմքերը խախտողներին ոչնչացնելու...

Սակայն դուր ջանք. հաստատ կամքեր եւ ազատասէր, ժողովրդի ցաւերով այլուդ սրտեր կը յաղթեն բռնութեան հնարած ամէն մի միջոց. եւ այս բացառիկ կամքերն ու սրտերն են որոնք կատաղի կոիւ կը մղեն բռնութեան դէմ, միլիոնաւոր գլխանի ամբոխը ոտքի կը կանգնեցնեն եւ միլիոնաւոր տանջողների վրէժը կը լուծեն:

—Ուրեմն դուք սուէք, դիմեցի ես բարկացած քարտուղարին:

—Մենք չենք կարող տալ, պէտք է դիմէք ներքին գործոց նախարարին, ասեցի նա:

—Իսկ նախարարը կը պատասխանէ մի քանի ամսից յետոյ՝ այնպէս չէ՞, ասացի ես հեզնելով:

թէ ընդհանուր խաղաղութեան հիմն է 1871ին Պրիսմայի և Ֆրանսայի միջև կնքուած դաշինքը» :

Պէրլինը Նալթէ Նախրիս թըն . «Գերմանիա պէտք չէ որ անհագարար անձնատուր ըլլայ իր ձեռք բերած յաջողութեանց վաշխըին . հզօր ի ներքուստ և արտաքուստ , պէտք է որ շնորհ փնտռել տալ իր բարեկամութիւնը և իր ատելութիւնը երկիւղալի ընծայել» :

Պէրլինը թակալած կը խոստովանի թէ բաժակաճառերուն մէջ գործածուած իրաւունք և արդարութիւն բաւերը կրնան Ալլաա-լօնէնի վերաբերիլ . բայց որովհետեւ Ձարը խաղաղութեան խօսք կընէ , մէկ ձեռքովը հոտ կառնէ ինչ որ միւսով կուտայ :

Պօսիշէ Ձայթունկ որ , չափաւոր թերթ մըն է , չի վարանիր հաստատել թէ Գերմանիան գողցուած կալուածը ետ առաւ 1871ին «Գերմանիա դիտնալով որ կրնայ մշտապէս սալի դերը խաղալ , որոշեց անգլիոյ մըն ալ մուրճի դերը խաղալ : Գալով անիրաւ աշխարհակալութեանց , անոնք մեզ համար բնաւ հրապոյր չունին , եթէ նոյն իբր ամէնէն փայլուններն եղած ըլլան» :

Վիեննայի Ռայխսպէր կըսէ թէ Ֆրանքենուս բաժակաճառերը պէտք է մոռնալ տան Անգլիոյ :

Վիեննայի Ապրեսպալատ կը կարծէ թէ բաժակաճառերուն իրաւունք և արդարութիւն բաւերը սեղմ հանգամանք մը ունին , քիչ մը խորհրդաւոր :

Բէսթէր Լօյտ դիտել կուտայ թէ անկարալի է հաւատալ որ Ձարը , որ մինչեւ հիմա միշտ աւանդականութեանց հետ համաձայնութեամբ գործակցեցաւ խաղաղութեան պահպանման համար , կարենայ այսօր դուռը խաղաղութեան դէմ :

Իտալական թրիպունտ թերթը կը կարծէ թէ նոր դաշնակցու-

թիւնը ուղղուած է մասնաւորապէս Անգլիոյ դէմ : Պրիսմայի կողմէ Գերմանիա դաշնագրերուն պարանալութիւնը : Ուրիշ խտալուան թերթեր կը յայտարարեն թէ Երբեակը վախու լոյն չունի Երկնակէն . երեք՝ երկուքի դէմ :

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Սէնդ Ջէյմս Կալէթ կըսէ . «Եթէ Երկնակ Գաշնակցութիւնը յարձակողական հանգամանք չունի գոնէ ճշնում գործելու միջոց մըն է : Եւ այս տեսակետով մեծ կըշիռ կըստանայ» :

Կլօպ յօդուած մը կը հրատարակէ որուն մէջ կերեւի իր սքըտնեղութիւնը նոր Գաշնակցութեան դէմ : Իվլենիկ Սթանտարտ կը պնդէ որ Անգլիա պահանջէ ծանօթանալ դաշինքին պարունակութեանը :

Թայմը . «Բօթօ մարտանաւին մէջ եղած յայտարարութիւնները վերջ կը դնեն Գերմանիայ առաջնութեան և զրեթէ գիկտատորա կան զօրութեան զօր անիկա քառորդ դարէ ի վեր կուգէ գործադրել Եւրոպայի մէջ» :

ԱՂՋԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

Գիշերօթիկ և ցերեկեայ կսկսի 15 Սեպտեմբեր

Տնօրէնութիւնս պատիւ ունի ներկայացնել ուսումնասէր ժողովրդեան նորահաստատ կրթարանին պայմանները :

Կրթարանը երկու մաս պիտի ունենայ , Մանկապարտեզի և Նախակրթարանի : Մանկապարտեզի մէջ կընդունուին երկու սեռէ մանուկներ , որոնց կաւանդուին Ֆրէճսկէ-հանմէթատով մանկապարտիզի ամէն պահանջաւորները . իսկ երկրորդին մէջ պիտի գործադրուի նախ տարրական նախակրթարանի մը ծրարգիրը , ի հարկին աւելցնելով բարձրագոյն երկու դասարաններ :

Բաց աստի Տնօրէնութիւնս առաւելապէս նպատակ ունի ազգա-

լին ընտիր կրթութիւն մը տալ աղջկանց , իւր ծրագրին վրայ աւելցնելով ֆրանսիերէն և Պուլկարերէն լեզուները , ինչպէս նաեւ ատենին տնտեսագիտութեան , ձեռարուեստի և ձեռագիտութեան անհրաժեշտ դասերը :

Հայ ազգին ներկայ ցրուած վիճակին մէջ՝ օգտակար ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ՝ Տնօրէնութիւնը պատրաստ է նաեւ ընդունիլ կրթարանին մէջ գիշերօթիկ աղջիկներ ալ՝ գոհացոյցի պայմաններով , վառնայի ամէնէն ընտիր թաղը օգուէտ չէնքի մը մէջ , ուր պիտի վայելին ծնողական խնամք , մաքուր սընունդ և ազատ օգ :

Ընդունելութեան պայմաններու մասին ուղղակի Տնօրէնութեան հետ պէտք է տեսնուիլ , բացի կիրակիէ , ամէն օր 9-12 (Ը. Ե.) իսկ գիշերօթիկներու մասին գրել հետեւեալ հասցէին .

Տնօրէնուհի Կրթարանին
ԱՐՄԱԻՆԵՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ
Կրթ թաղ , 5 թիւ , Վառնա
1897 Օգոստոս 22 1-3

ԵՒՆԻ ՏԵՀՇԵԹ

Իվլէքի նուսխէմիդէտէ՝ Լօնտրա կաղէթալարըն՝ նէշրիթը իւզրէ , Սիվաստա հալ թէհլիքէ-լի օլտըղընա վէ էրմէնիլէրին ըստանա գըլամ իտէհէքլէրինտէն գօրգուլտըղընա տայիւր Սէր գօմիսէր Շաքիր բաշանըն Պապը Ալիյէ պիւր թէհլիքաֆ վէրմիշ օլտըղընը եաղմըշ ըտըզ :

Պու հաֆթա Սիվաստան վէ տախլիլ վիլայէթտէ սայիւր գասալարտան վիւրուտ իտէն խուսուսի մէքթուպարտան անլաշըլտըղը իւզրէ , թիւրքլէր հիւքիւ մէթին թէվասուլը իլէ , վէ թօգատ մահքիւմլէրինին իտամտան գուրթուլմանընտան քէսպի գուվ-վէթ իտէրէք , եէնիտէն միլլէթտաշարըմըզա գարշը խուսումէ-

թէ պաշամըշլար տըր . հէրքէս չարսըտա սէլպէսթ կէզէմէտիկի-նի վէ էմիլիլէթ ու տասյիշ օլմա-տըղընը պիւտիւրմէքտէ տիւրէր :

Ձաթէն Շաքիր բաշա մէքքիւր թէհլէկրաֆը իլէ՝ Սիվաս վիլայէթինտէ քէնտիսի գըրկըն թէրթիպ իթմէքտէ օլտըղընը կէօսթէրմիշ տիւր . պու բաշա Սէր-գօմիսէր իւնվանը իլէ Անատօլույա կիթտիկի կիւնիւնտէն պէրու , այագ պաստըղը եէրլէրի գուրուլմըշ վէ էրմէնիլէրէ մախսուս պիւր գօրիլա օլմուշ տըր : Պու տէֆա թօգալթ ճանիլէրինէ աֆիլը շահա-նէ օլմասը տախի բաշանըն իլլէ-յէհէկի եէնի եէնի խապասէթլէրէ սուհուլէթ վէրմիշ օլաճագ տըր :

ԵՐՄԵՆԻ ՀԱՐԵՔԵԹԻ

Տէլլի Նիւսին թէպրիդտէն ալտըղը մալիւմաթլարա կէօրէ , օգոստոս 6 տա 300 էրմէնիլէր Աճէմիսթան սինօրընտան կէչիւպ խօնասար օլմասընը չատըրլարէ պիւր օրտուկեաճ թէշքիլ իթմիշ օլան ֆիւրալէր իւզէրինէ նակէ-հան հիւճիւմ իթմիշլէր . տէհէթլի պիւր գալկատան սօնրա քիւրտլէրտէն 300 տէն 600 քիշի էօլիւ վէ եարէլի տիւշմիշ : Համիտիյէ սիւվարի ալայը գօմանտանլարընտան Շէրէֆ բաշա տախի էօլմիւշ տիւր :

Պու հիւճիւմտէ էրմէնիլէր եալընը 20 քիշի թէշքիլաթ վէրմիշ օլուպ , տաղլարա չէքիլմիշլէր . էրմէնիլէր գարը վէ չօնուգլարա սայա տօգանմամըշլար վէ մուհիմ էվրազլար էլէ կէչիլմիշլէր տիւր :

Սէնթ հիւքիւմէթի պու կիպի հարէքէթէ թէքրար մէյտան վէրմէմէք իլիւն լազըմ կէլէն թէտպիւրլէրի էլէ ալմըշ տըր :

—Այո , եղաւ քարտուղարի պաղ պատասխանը :

—Բայց , պարոն , ես կուգէի չունեմ իմ դրամը զեւ չէք ստացել , ինչ պէտք է անեմ :

—Այդ ձեռ գործն է :

Կատարութիւնից ամբողջ մարմնով սկսեցի դողալ . այդ միջոցին ինձ մօտեցաւ միջանասակ եւ թխաղէմ մի պարոն եւ ինձ առաջարկեց քսան կուպէկ , ասելով՝

—Վերցրէք , պարոն :

Արիւնս գլուխս թռաւ , եւ ուզում էի հայհոյել . նոյն իսկ ապտակել այդ զթախիւտ պարոնին , բայց նա բարի ժպիտը երեւին ասեց .

—Մի վիրաւորվեցէք , ես պարտք եմ տալիս , աւելին չունիմ : Ես վերցրի քսան կուպէկը եւ առանց շնորհա-կալութիւն յայտնելու , բոլորովին յուզված դուրս թռայ այդ անիծեալ տեղից :

Խենթացածի պէս էի գնում փողոցով , ամեն մարդ ինձ ուշադրութեամբ

նայում էր , երբեմն երբ ետեւիցս ոտքի ձայն էի լսում , իսկոյն ետ էի նայում :

Ինձ թվում էր թէ կրկին պահապան ղեկուորներն են զալիս ետեւիցս :

Վերցրած քսան կուպէկովս ճաշեցի , մի քիչ էլ ծխախոտ գնեցի եւ սկսեցի քաղաքում ման գալ :

Վերջապէս ցուրտ զգացի , բայց ո՛ւր գնայի , չէ՛ որ տուն չունէի եւ ոչ գրամ որ հիւրանոց գնայի . ո՛ւմ գուրը բաղխէի , ո՛վ ինձ տեղ կը տար . . .

Վերջապէս գնացի ինձ վրա հակելու նշանակված ոստիկանի մօտ եւ նրա հետ միասին գնացիք ինձ համար տուն վարձելու , սակայն ամեն տանտէր արհամարհեց անդրամ արքսորա-կանիս . . .

—Անկարելի է տուն գտնել , պարոն , մինչեւ որ դրամ չտանաք , ա-սեց Ալէքսէյը (ոստիկանի անունը) ստիպված պէտք է լինէք առ այժմ պառկել ոստիկանատունը :

—Ոչ , բարեկամ , որ իմանամ թէ հենց այս գիշեր պէտք է ստաչիմ , էլ ոստիկանատունը չեմ պառկի , պատասխանեցի եւ : Ալէքսէյը մի փոքր մտածեց իմ այդ պատասխանի վրա , ապա ասեց .

—Պարոն , եթէ կուգէք , գնանք մեր տուն . մինչ ձեռ գրամ ստանալը ապրեցէք ինձ մօտ , ես հաւատացած եմ որ դուք ապերախտ չէք գտնվել :

Ուրախութեամբ ընդունեցի Ալէքսէյի առաջարկութիւնը : Մի քանի վայրկեանից ես նրան տունը հացով թէյ խմեցի եւ առանձնացայ ինձ յատկացեալ սենեակը :

Առաջին ազատ գիշերը ինձ համար մի սեւ գիշեր էր . մտածում էի ինչպէս անէի որ չուտով դրամ գտնէի . կամ գրէի , կամ հեռագրէի , որ ինձ համար վտանգի չենթարկվէր մի ուրիշ այդ միտքը ինձ աւելի էր տանջում : Վերջապէս միտքս ընկաւ մօրեղբայրս . իսկոյն որոշեցի վաղը նրան հեռագրել :

Սակայն սեւ սեւ մտքերը սկսեցին ինձ խեղդել , իսկ եթէ իմ դրամը ուշանար , մօրեղբայրս էլ հեռագիրս չստանար կամ օգնել չուզէր . ինչ կը լինէր իմ վիճակը—սովամահ , ցրտատար կամ անձնասպան լինել . . . անա քեզ եւ իմ փափագած ազատութիւնը :

Վերջապէս մի կերպ լուսացրի եւ իսկոյն գիմեցի Ալէքսէյին .

—Ինձ հինգ լուրջի է հարկաւոր , բարեկամ :

—Բայց որտեղից ճարեմ , ես դրամ չունեմ :

—Այստեղ հրէա չկայ , հարցրեցի ես :

—Ինչ էք անելու :

—Պարզիւս գրաւ կը դնեմ :

—Կայ բայց չի վերցնի , որովհետեւ նրան խստիւ արգիլված է :

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

—X—

Թայմըդտա ակիտեթի օգուհմըլ տըր :

—Օն եէտի եաշընտա պիր էր-մէնի գըզ Սթանպուլտա Ֆրանսա վէ իթալիա սէֆարէթհանէլէրինէ մէքթուպար կէթիւրտիկի էսնա-տէ սօգադտա բօլիպէրտէն թու-թուլմըլ վէ թէվգըֆ օլընմըլ տըր : Թայմըզըն պէյանընա կէօրէ , մէզ-պուրէ գըզ մէքթուպարտա նէ եազըլմըլ օլտըզընը պիւմէզ իմիշ , եալընըզ Լօնտրատա պուլունան նիշանըսը գըզըն թանըմամըլ օլ տըզը պիր ատէմ վասըթասը իւէ պիր մէքթուպ եօլլամըլ օլուպ , օլ մէքթուպը քէնտիսինէ վէրէն զաթ նէ էմր վէրիր իսէ իճրա իթմէ-սինի թափսիյէ իթմիշ :

Էլլէլէր տրակոմանլարըն վասի-թասը իւէ Պապը Ալիյէ - միւրա-ճաթիւ մէզպուրէ գըզըն հապս-հանէտէն չըգարըլմասընը իտտաա իթմիշէր տիր :

Սթանպուլտան քէշիտէ օլընան պիր թէլէկրաֆըն պէյանընա կէօ-րէ , Սուլթանըն էրմէնի միլլէթի-նէ պիտիրիզ պուլուրտըլը խայըր-խաշըլընտան (.) տօլայը էրմէնի Բաթրիգհանէսի Սուլթանա խի-թապ պիր թէլէքթուրնամէ գալէմէ ալմագտա ըմըլ :

Պուրատա խայըրխաշըլը քէլի-մէսի պու տէֆա Սթանպուլտա գըրկըն եաբտըրմամագ՝ անլաշը-մալը տըր :

Կէնճ թիւրքլէրին պիր ֆըրգա-սընըն ըէյիսի օլուպտա ախիւրէն Սթանպուլ կիթմիշ օլան Սու-րատ պէյ իքի հաֆթատան պէրի Սթանպուլտա կէօրիւնմէքտէ վէ տօթթարը տախի անըն նէրէտէ օլտըզընը պիւմէքտէ օլտըզըն-տան , թէքըր ֆիրար իթմիշ օլ-տըզընը զանն օլընըյօր :

Էրմէնի ֆէտաիլէրին Աճէմիս-թան սինօրընտան թէքըր կէշ-մէլէրինէ մէյտան վէրմէմէք մագ-սէտի իւէ թիւրք հիւքիւմէթի սի-նօր պօլարընը թազվիյէ իթմիշ տիր :

Գարատէնիզ ճիվարը պահրիյէ ըէտիֆ ասքէրլէրին մէմլէքէթլէ-րինէ կիթմէլէրի իշիւն Պահրիյէ նէգարէթլինտէն էմր օլընմըլ տըր : Խայրի բաշանըն թաշթը գօ-մանտասընտա՝ իզմիր սուլարընտա պուլունան օսմանը տօնանմասը պիր վագըթ իշիւն տահա ըէտիֆ-լէրինի պըրագմայաճագ ըմըլ :

Եսնան թիւրք մուհարէպէսին-տէ օսմանըլարըն ֆիթուհաթընըն զիքրի իշիւն պահրիյէ վէ պէրրիյէ ասքէրլէրինէ Սուլթան մէտալիոն-լար վէրմիշ տիր :

Կիրիտի իսլամ ֆագիրլէրէ ա-

յիտ օլմագ իւզրէ թիւրքիտա թէճէմիւ օլընան իանէնի մըզ-տարը 4,705,687 չրուշա պալիզ օլմուշ տըր : Պուլունան մատա Սուլթան Կիրիտ իսլամարը իշիւն նագըտ ագճէ վէ ուն վէ բիրինճ վէ սայիր մէքթուլթ հօլլամըլ ըտը :

Եսնանիսթանըն թիւրքիտա էօտէմէսի մուգարրէր օլան թազ-մինաթը հարպիյէ իշիւն օլաճագ իսթիգրազը ինկիլթէրա , Ֆրան-սա վէ Բուսիա տէվլէթլէրին թէ-մին իթմէսի պապընտա Լօրտ Սօլպէրինին թէքիֆինի՝ սուհ-ահանմէսինին ալթընճը մատտէ-սինէ մուխալիֆ օլմասը ճիհէթլէ տէվլէթլէր ըէտտ իթմիշէր տիր :

Պիր Մըսըր վաբօրընտան Բի-րէ էօնիւնտէ էրմէնիլէրին պիր Տուրքիի գուրթարմըլ օլտըզըլը-նը եազմըլ ըտըզ , պիւ ախիւրէ ալընան մալիւմաթլար գուրթըլան պիր էրմէնի օլտըզընը վէ պու-պապտա վաբօրըն գաբիթանընա գարըլ ճէպը իլթիմալ օլընտըլը-նը պիրտիրմիշէր տիր :

ԻԶՄԻՐՏԷ ՄՈՒԳԱԹԵԼԷ

—X—

Օսմանը տօնանմասընը իզմիր էօնիւնտէ պուլընմասընտան թիւրք-լէր քէսպի գուվվէթ իտէրէք , մէքթուր վիլայէթ տախիլինտէ տախի իսթիթիյանլարա գարըլ ուլիոնսըզըլար իճրա իթմէկէ պաշլամըլար տըր : Ալթինա կա-զէթալարըն պէյանաթընա կէօրէ , կէշէնլէրտէ իզմիրէ եագըն պիր մահէլտէ թիւրքլէր 4 ազատան միւրէքթէպ պիր ֆամիլիայը գաթլ ու մահվ իթմիշէր , հիւ-քիւմէթ կէօնա գաթիլլէրի պուլ-մագ խուսուսընտա թահգիգաթա կիրիշմիշ վէ իսթիլալա սէպէպի-յէթ վէրմէմէք իշիւն՝ սէս սէտա չըգարմագըզըն էօլիւլէրին տէֆն իտիլմէսինի Բուժ եպիսկոպոսընա էմր իթմիշ . պու տախի 2-3 բա-բաս եօլլայուպ , մագթուլարը գալտըլթմըլ տըր :

Կ Ի Ր Ի Տ

—X—

Կիրիտի մուհասէրէ իտէն Էվ-րոբա սէֆինէլէրին տաղըլմասը խուսուսընա ամիրալար մէնսուպ օլտըզըլար հիւքիւմէթլէրլէ մու-խապէրէ իթմէքտէ իմիշէր :

Կէշէն սալը կիւնիւ Կիրիտտէ թիւրք ասքէրլէրինին մէքթէզի իւզէրինէ ասըլար աթէշ իթմիշ-լէր , ինսան թէլէֆիլաթը օլտըզը պիլինմէյօր իսէտէ , ասըլար թիւրքլէրտէն 11 գըսլագ վէ 8 էշէք սիւրմիւշէր տիր :

Կիրիտ ասըլարը ըէյիսիլէրինտէն Հաճի Միխալի ամիրալարա պիր թէլէքթինամէ եօլլայուպ , Գան-

եանըն Ղարպ ճիհէթինտէ թիւրք ասքէրլէրինտէ պուլընան իւշ նօգ-թալարըն էվրոբա ասքէրլէրին-տէն զապթ օլընմասընը թալէպ իթմիշ . վէ Սթանպուլտըն պէյա-նընա կէօրէ , մէքթուր նօգթա-լարտան պիրի թիւրքլէրտէն ալըն-մըլ տըր :

Կիրիտ իշիւն տէվլէթլէրին գարարը իւզրէ օթօլօմի ուսուլի-նին մէճլիսի մէպուսանտան գա-պուլ օլընմասը էվրոբատա խօշ-նուտիյէթ հուսուլա կէթիւրմիշ օլ-տըզը կազէթալար եազըյօր իսէ-տէ , էլան իճրաաթա թէլէպպիւս օլընմամըլ տըր :

ՀԻՆՏԻՍԱՏԱ ԸՍԵԱՆ

—X—

Ինկիլթէրանըն թահթը հիւք-մինտէ պուլան Հինտիսթանըն Շիմալի-Ղարպ ճիհէթինտէ ըս-եան էլան տէվալ իթմէքտէ օ-լուպ , Պօմպէտէն կէլէն պիր թէ-լէկրաֆ՝ պուլունան պիր գաշ կիւն էվվէլ Հանկու եագընլարընտա թէճէմիւ օլընան Օլագչա գա-պիլէսինտէն 10000 քիշի ինկի-լիզլէրին հիւքիւմինէ մուգալմէթ իթմէկէ հազըլլանմըլ պուլունտը-զընը վէ ժէնէրալ Եըլթմէն Պիքս պիր ալայ ինկիլիզ վէ պէշ ալայ եէրլի ասքէրլէրլէ անլէրէ գարըլ եիւրիւմէքտէ օլտըզընը վէ ասը-լարա կէրի գաշմաղա մէյտան վէր-մէմէք իշիւն պիր թօքը պէօլիւ-կի վէ պիր ալայ գարկըլը ասքէր-լէ եօլլարը քէսմէքտէ իտիլինի պիւտիրմիշ իտի : Պու գալկանըն նէթիճէսինէ տայիր մալիւմաթ ալընամամըլ տըր :

Ինկիլթէրա հիւքիւմէթի Աֆ-ղանիսթան էմիրինէ պիր նօթա վէրուպ , ասըլարըն սինօրտան քէշտիկիւզար իթմէլէրինէ միւ-սատէ վէրիլմէմէսինի թալէպ իթ-միշ օլմասը իւզէրինէ , Աֆղանիս-թան ինկիլիզլէրէ սուրէթի տօս-թանտէ ճէվապ վէրմիշ վէ սի-նօրտա ասըլարըն թէտիպինէ չա-լըշաճազընը վատ իթմիշ տիր :

Ֆագաթ տիկէր թարաֆտան Տէյլի Նիշաին Բոմատան ալտըլը մալիւմաթա կէօրէ , իթալիա գօնսօրոսընըն վէրտիկի րաբօրթ՝ Հինտիա հուսուսընտա ըսեան ինկիլիզլէրին պիւտիկինտէն զիյա-տէ քէսպի վէսամէթ իթմիշ օլ-տըզընը կէօթթմէքտէ վէ պու իթիլալը պաստըրմագ իշիւն զի-յատէսի իւէ զօրուգ չէքիլէճէկի-նի պէսթ ու պէյան իթմէքտէ իմիշ :

Սիւլատան ախիւրէն կէլէն պիր թէլէկրաֆ տախի , Հինտիլէրին պազը ըէյիսիլէրի վէ պէլլէրի քէն-տի գուվվէի հարպիլէրինին ինկ-լիզլէրէ մուգալմէթէ թախսիս իթմիշ օլտըզըլարըն պիւտիրմիշ տիր :

ԶԱԽԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

վառնա 27 Օգոստոս

ԵՆԵԻ ՄԱՀՍՈՒԼ

Պուշտայ

Վալօն , լիպրա 51-53 , հէքթօլ-10.50-11.50 ֆրանք

Արապա , լիպրա 47-53 հէքթօլ-7-12.40 ֆրանք

Արքա

Լրպրա 38-41 , հէքթօլ-4.80-5.30 ֆրանք

Ֆառաշեա

100 օգգոսը 20-26 ֆրանք՝ մալա կէօրէ

Նարօլէոն 20,60 ֆռ. հիսապը իլէ կիւնտէ 3-4 վալօն վէ 80-100

արապա պուլտայ , 10-15 արապա արբա վէ 7-8 արապա ֆասուլեա կէլմէքտէ տիր :

Էսկի մահսուլտան կիւնտէ 5-6 արապա պուլտայ ինմէքտէ վէ 12-14 ֆրանքա սաթլըմագտա տըր . լիպրասը 55-59 :

Ի ՆՊԱՍՏ ԱՂԲԱՏԱՆԱՄԻ

Աղքատախնամ ընկերութիւնը կը խնդրէ մեղմէ ծանուցանել թէ Տիար Մ. Միսակեան , նորահաստատ նապ-րաւաճառ ի թաշ եօլ , թիւ 1512 , յանձն առած է մէկ ու կէս առ հար-իւր նապաստ մը ընել ընկերութեանս իր կատարած բոլոր գործառնութիւն-ներուն վրայ :

Ուստի անոնք որ կուզեն անուզ-դակի կերպով նապաստել Աղք. ըն-կերութեան՝ կը հրաւիրուին զիմի յիշեալ նապարաւաճառին , որ իր ապ-սանքներու լաւութեան կը միացնէ գոհացուցիչ ածանութիւն :

ԱԶԴ

Օր. Տեպրէլէն , տեսչուհի աղջկանց ֆրանսական ցորիկօթիկ վարժարանին որ բացուած է ի վառնա, փողոց Կու-կուլիաղա , թիւ 82 , պատիւ ունի ծանուցանել այն ընտանիքներուն ո-րոնք պիտի հաճին զինք պատուել ի-րենց վստահութեամբ , թէ վարժարա-նին բացումը տեղի պիտի ունենայ Սեպտ. 1/13 ին : Պուլկարեյէն , Ռու-սերէն եւ Գերմանիէն լեզուներէն զատ , ուրիշ ամեն լեզու կաւանդուին ֆրանսերէնով , Երաժշտութիւն ալ կը դասախօսուի :

3-4

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ա. ԶԱՐԲԱՆԵԼԵԱՆԻ

Ապսիլրահիւան լեզվիքի դիւնա ի վառնա

Կը վաճառուին դասագրքեր . դպրոց-ներու համար զեղչ : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին եւ փոխաբէն կընդունուին նամակադրոշմներ : Գնում եւ վաճառում գործածուած նամակադրոշմներու (բուլ) :

ԱԶԴ

1897 սեպտեմբեր 1էն սկսեալ վար-ձու պիտի տրուին Հաճի Բանաջօ Գա-րապաթաքի գինետունը եւ պարտէզը , որ կը գտնուին վառնայի Երզ թաղը , թիւ 5 , ծովեզերեայ պարտէզին գի-մացը :

Վարձել փափագողները մանրամաս-նութեանց համար կը հրաւիրուին գի-մել կալուածատիրոջ , գրաւոր կամ բերանացի , առ

ՀԱՅԻ ԲԱՆԱԺՕ ԳԱՐԱՊԱԹԱԲ
վառնա , 25 Յուլիս 1897 6-6